ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող
բանասիրական գիտությունների թեկնածու
mariamhovsepian@mail.ru

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՒՐՔ»-Ը ԵՎ «ՈՐԲԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ»-Ը ՊՈԼՍԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1919–1921 ԹԹ.)

Բանալի բառեր՝ հայրենիք, որբ, գաղթականներ, բարեգործություն, հանգանակություն:

Ցեղասպանությունը վերապրած արևմտահայ տարագիրների համար նորմալ ապրելակերպ և տանելի կենսապայմաններ, առավել հաճախ, գլխի վրա ծածկ և սննդի օրապահիկ ապահովելու բարդ, բայց շնորհակալ գործը հիմնականում ստանձնել էին Մուդրոսի զինադադարից հետո Կ.Պոլսում վերաբացված արևմտահայոց պատրիարքարանը և բարեսիրական մի շարք կառույցներ, միություններ ու կազմակերպություններ, այդ թվում՝ ամերիկյան ու եվրոպական: Բարի կամքի այդ արտահայտություններն առավելապես կարծես հոգու պարք լինեին, որոնք ցույց էին տալիս, մասնավորապես, հայի սրտի մեծությունը և անծանոթ կարիքավոր ազգակիցներին օգնության ձեռք մեկնելու պատրաստակամությունը: Ի սկզբանե այդ բարեգործական ձեռնարկներն, ինչպես վկայում էին ժամանակակիցներն ու այդ օրերի պոլսահայ պարբերականների հրապարակումները, կամավոր սկզբունքով էին իրականացվել՝ շրջապատի անձանց վարակելով դրանց մասնակցելու ցանկությամբ: Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բարեգործական ծրագրերը համակարգվել ու վերահսկվել են

համապատասխան մարմինների կողմից, ինչը կարևոր կազմակերպչական քայլ էր նման նախաձեռնությունները կյանքի կոչելիս: Այդպես եղավ պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի զարկ տված հայապահպան երկու միջոցառումների՝ «Հայրենիքի տուրք»-ի և «Որբերի փրկության շաբաթ»-ի դեպքում:

Երբ թերթում ենք 1919–1921 թթ. պոլսահայ պարբերականների էջերը, աչք են զարնում հենց այդ բովանդակությամբ լուրերը, թղթակցությունները և հոդվածները, որոնք ընդգծում են այդ ծրագրերի պահանջված լինելը ոչ միայն Կ.Պոլսում կենտրոնացած, այլև աշխարհասփյուռ հայ հասարակության շրջանում, ինչպես նաև ակնհայտ էին դրանց համահայկական բովանդակությունն ու աշխարհագրությունը: Մենք, կարծես, տեսնում ենք, թե հայրենի բնակավայրերում ապրելու իրավունքից ու հնարավորություններից մեծ մասամբ զրկված գաղթականներին ինչպես էին փորձում օգտակար լինել հայ հասարակական-քաղաքական շրջանակները, անհատ բարեգործներն ու տարբեր կարողությունների տեր անձինք, որոնցից շատերը թերթերի աշխատակիցներից համեստորեն թաքցնում էին իրենց անունները՝ խուսափելով բարձրաձայնել քրիստոնյային վայել արարքի մասին: Նրանք Առաջին աշխարհամարտից հետո Թուրքիայի մայրաքաղաքում և արևմտահայ գավառում տիրող անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններում անգամ կարողացել են անհրաժեշտության դեպքում համախմբվել և օգնության ձեռք մեկնել կարիքավորներին: Հարազատ ժողովրդի փրկությամբ մտահոգ հայությունը քաջ գիտակցում էր միասնական ջանք ու եռանդի անհրաժեշտությունը: Այդ մասին, ահա, թե ինչ էր գրում իր հուշերում Զավեն արքեպիսկոպոսը. «Կար փրկութեան աշխատանք մը տարագրեալներու և որբերու համար, և՝ դժուարին նպաստի գործ մը, որ մեծ ճիգերու կը կարոտէր…Հազարներով էին անոնք, որոնք Պոլիս մնացին: Անոնք ընդհանրապէս ներքին գա-

ւառներու բնիկներն էին, այրիներ և որբեր մեծ մասամբ, վասնզի այրերը սպանուած էին: Ասոնք պատսպարել և կերակրել Պոլսոյ տեղահանութենէն զերծ մնացած հայութեան պարտականութիւնն էր: Պոլսոյ հայերը այս պարտականութիւնը գիտակցութեամբ և պատուով տարին»[1]: Նրանք հիմնում են Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները և Հայ կարմիր խաչը[2]: 1919 թվականի փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային խնամատարությունը, որը, մասնաճյուղեր ունենալով Կ.Պոլսի գրեթե բոլոր թաղերում, բացում է գաղթականների կայաններ ու որբանոցներ[3]:

«Ճակատամարտ» օրաթերթում զետեղված արևմտահայոց հոգևոր առաջնորդի շրջաբերական-կոնդակում, օրինակ, ասվում էր, որ հայը լավ հատկություններ ունի թե՛ անհատապես, թե՛ հավաքական համատեղ կյանքում և, անհրաժեշտության դեպքում, նա կարողանում է լցվել եղբայրասիրության զգացումներով[4]: Ազգի վերականգնման և նոր վերածննդի գործում հաջողության հասնելու համար պատրիարքը խորհուրդ էր տալիս գոտեպնդվել, հրաժարվել վեճերից, եսասիրական ու սնափառ ձգտումներից, երկպառակություն և բաժանում առաջ բերող առիթներից[5]: «Մեր նուիրական հայրենիքին վերաշինութեան համար պէտք է, որ ամեն հայ սպաս դնէ իր կարողութիւնները, իր ձիրքերը, իր ինչքը և կեանքը: Յաջողութեան էական պայմանը համազգային գործակցութիւնն ու համերաշխութիւնն են...Լացն ու կոծը բաւական են, լուրջ ու կազմակեր-

---

[1] **Զաւէն արքեպս.,** *«Պատրիարքական յուշերս վաւերագիրներ եւ վկայութիւններ»,* Գահիրէ, 1947, «Նոր աստղ», էջ 279–280:

[2] Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային կարմիր խաչին (տե՛ս **Զաւէն արք.,** նշվ. աշխ., էջ 280):

[3] Նույն տեղում:

[4] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 108 («Զավեն պատրիարքի շրջաբերական-կոնդակը»):

[5] Նույն տեղում:

պուած աշխատանքի պէտք կայ...Մեր նահատակներուն այրիներն ու որբերը տակաւին թշուառութեան մէջ կը հեծեն, և առհասարակ համազգային այս արեան ջրհեղեղէն ազատուող խլեակները այսօր մերկ ու անօթի և անպաշտպան կը կարօտին քու գթութեան և եղբայրական օժանդակութեան»[6],- գրում էր նա կոնդակում: Ելնելով վերոգրյալից՝ նաև կոչ էր անում միայն ավելացածից բաժին չհանել կարոտյալներին, այլ գիտակից զոհողությամբ, նվիրական պարտականության համոզմունքով ունեցածի կարևոր մասը տալ այնքան ժամանակ, մինչ որ թշվառության վերջը կգար և հայության համար կստեղծվեին խաղաղ ու բարեկեցիկ ապրելակերպի պայմաններ: Ասվածը հիմնավորում էր ազգային կառույցների կատարած ուսումնասիրությունների և մշտադիտարկման արդյունքներով. «Մինչեւ հիմա եղած հանգանակութիւնները և դրամական նուիրատուութիւնները շատ սակաւ ու անբաւական են աղէտին և կարօտութեանց համեմատութեամբ»[7]:

Զավեն արքեպիսկոպոսի և հայ եկեղեցական հարանվանությունների ևս երկու ղեկավարների մեկ այլ կոչ էին մեկ ամիս հետո տպագրել պոլսահայ պարբերականները, որտեղ նորից հղում էին անում այն հանգամանքի վրա, որ մինչ այդ ավարտված բարեսիրական օժանդակությունները չէին բավարարում եղած պահանջարկը, ուստի անհրաժեշտ էր մեկ միասնական սնդուկի մեջ դրանք կուտակել և բաշխել ըստ կարիքավորության աստիճանի[8]: «Նոյնիսկ ամենադոյզն չափով բաւարարութիւն տալու համար ներկայիս անմիջական պէտքերուն, առ նուազն մէկ միլիոն ոսկիի պէտք կայ այժմ: Ուստի Համազգային միացեալ խորհուրդը ձեռնարկած է ազ-

[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում, 1919, թիվ 129 («Առնվազն մեկ միլիոն ոսկիի պետք կա»):

գային ընդհանուր հանգանակութեան մը»[9],- իրենց կոչում տեղեկացնում էին հայության հոգևոր երեք պետերը՝ արևմտահայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, բողոքական հայերի հոգևոր հովվապետ Զենոբ Պեզճյանը, կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդի տեղապահ Օգոստինոս արքեպիսկոպոս Սայեղյանը:

Գործունեության ընթացքում պարզորոշ էր դառնում, որ միայն այդ կառույցների անցկացրած հանգանակությունները և անհատական կամ խմբային նվիրատվությունները բավական չէին տարագրյալների կարիքները հոգալու համար: 1919 թվականի սեպտեմբերի սկզբին Ազգային երեսփոխանական ժողովն օրենք է ընդունում, որի համաձայն, այդ ամսից սկսած, վաստակի տեր յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողությունների չափով տուրք վճարել[10]: «Ասով պիտի հոգացուէին պէտքերը այն ազգակիցներուն, որոնք թշուառ և անպատսպար մնացած էին, մինչև որ կարենային վերահաստատուիլ իրենց հայրենիքին մէջ: Այս պատճառով այս տուրքը «Հայրենիքի տուրք» կոչուեցաւ և կը վճարուէր երկու ձեւով. միանուագ ու ամսական»[11],- բացատրում էր Զավեն պատրիարք Տեր-Եղիայանը: Նա նաև նշում էր, որ ի պատիվ պոլսահայության՝ այդ տուրքից խուսափող գրեթե չէր եղել, իսկ շատերն իրենց նյութական կարողությունից վեր գումարներ էին հոժարությամբ տվել[12]: Պատրիարքարանը այդ տուրքի ստացագիրն էր պահանջում որևէ հարցով իրեն դիմողներից և չէր օժանդակում տուրքը չվճարողներին: Նույն կերպ էին վարվում Կ.Պոլսի եկեղեցիների թաղական խորհուրդները, որոնք մերժում էին մկրտության, ամուսնության և հուղարկավորության արարողությունների համար իրենց դիմող այն թաղայիններին, որոնք «նիւթական կարողութիւն ունէին

[9] Նույն տեղում:
[10] **Զաւէն արքեպս.,** նշվ. աշխ., էջ 280:
[11] Նույն տեղում, էջ 280–281:
[12] Նույն տեղում, էջ 281:

և չէին ներկայացներ «Հայրենիքի տուրքի» ստացագիրը» [13]: Տեղին է հիշատակել Նարինե Նուշերվանյանի այն դիտարկումը, ըստ որի՝ «Հայրենիքի տուրքի» գաղափարը, արմատներով հասնելով մինչև արևմտահայերի ազգային Սահմանադրություն, սկզբնապես դրսևորվել է ոչ թե իբրև բարեգործություն, այլ պարտադիր վճար, որը, որպես «Ազգային տուրք», ուղղվում էր հայ համայնքի զանազան կարիքները հոգալու գործին[14]:

Պոլսահայ պարբերականներն ողջունում էին Զավեն պատրիարքի եռանդուն գործելակերպը և ազգային մարմինների աշխատանքը հունի մեջ դնելու նրա ծրագրերը, ու թեև ըմբռնում էին այդ ծրագրերը խոչընդոտող օբյեկտիվ պատճառները, բայց գտնում էին, որ անհրաժեշտ էր արագացնել մեկ միլիոն օսմանյան ոսկին հանգանակելու կազմակերպչական աշխատանքները: Իբրև հայ հասարակության մի մասնիկ, մամուլի օրգանները ևս ներգրավվում էին համահայկական այս կարևոր ձեռնարկին: Դրանց էջերում գրեթե ամեն օր անդրադարձ կար այդ թեմային: Մասնավորապես տպագրվում էին ոչ միայն պատրիարքի կոչերն ու պարզաբանումները, այլև ներկայացվում էր, թե հայությունն ինչպես էր արագորեն դրական արձագանքում «Հայրենիքի տուրք»-ին միանալու՝ հայր Զավենի առաջարկին: Պարբերականներն անթաքույց կերպով արտահայտում էին իրենց և ընթերցող լսարանի տեսակետներն ու մոտեցումներն այդ և նմանատիպ ձեռնարկների մասին, անցկացնում էին փոքրիկ հարցախույզներ՝ պարզելու համար հայ հանրության մասնակցության աստիճանը բարեգործական տարբեր ծրագրերին, ինչպես և՝ նրանց վերաբերմունքը կազմակերպիչների, աշխատանքների որակի, հաշվետվության թափանցիկության վերաբեր-

[13] Նույն տեղում:

[14] Նարինե Նուշերվանյան, ««Հայրենիքի տուրքի» գաղափարի ծագումը և նրա գործադրման փորձերը Առաջին հանրապետության շրջանում» («ՎԷմ համահայկական հանդես», Երևան, 2019, թիվ 2, էջ I–XV):

յալ: Թերթերը հանդես էին գալիս նաև առաջարկներով՝ սկսված գործը ցանկալի արդյունքի հասցնելու ակնկալիքով: Դրանցից կարելի է առանձնացնել, ասենք, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթի այն դիտարկումը, ըստ որի՝ Կ.Պոլսի հայոց ազգային իշխանությունները պետք է իրենց աչալուրջ հսկողության տակ պահեին «զանազան անուններով յառաջ տարուող նուիրահաւաքութիւններն ու նպաստի ձեռնարկները»[15]՝ փորձելով մեկտեղել ու կենտրոնացնել դրանք որևէ կոնկրետ նպատակի կենսագործման համար: Այս կապակցությամբ հոդվածագիր Գ. Փափազյանը նշում էր. «Առանց կեդրոնացնելու և սիսթէմի մը վերածելու նպաստի և այլ հայրենասիրական մեր ձեռնարկները և խիստ հակակշռի ենթարկելու զանոնք, չենք կրնար ակնկալել, որ անոնք տան պահանջուած առաւելագոյն արդիւնքները, տեղի չունենան խաչաձեւումներ, նիւթական ու բարոյական ուժի վատնում, երբեմն ալ՝ չարաշահութիւններ»[16]:

«Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումները փաստում էին, որ 1920 թվականի հունվարի սկզբին պատրիարքարանը և Քաղաքական ժողովն ընդվզել էին թուրքական կառավարության այն որոշման դեմ, որի համաձայն՝ 1000 օսմանյան ոսկի էր տրամադրվելու հայ որբերի կարիքները հոգալու համար: Պատրիարքարանը հիշատակագիր էր ուղարկել Բ.Դռանը՝ նշելով, որ այդ նպատակով անհրաժեշտ էր հատկացնել ավելի քան 200.000 օսմանյան ոսկի[17]:

Արդեն 1920 թվականի դեկտեմբերի 30-ին պոլսահայ պարբերականները տպագրում են պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի

---

[15] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1919, թիվ 677 («Նորեն դիմենք ժողովուրդին, բայց նախ՝ հաշիվ տանք»):

[16] Նույն տեղում:

[17] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1920, թիվ 348 («Պատրիարքարանի հիշատակագիրը Բ.Դռան»):

կազմած հայ որբերի փրկության ծրագիր-հրահանգն՝ ուղղված Որբախնամի թաղային մասնաճյուղերին: «Ճակատամարտում» տեղադրված այդ հրահանգում տեղեկացվում էր, որ Որբերի փրկության կենտրոնական մարմնի որոշմամբ՝ Կաղանդից մինչև Սուրբ Ծնունդն ընկած ժամանակահատվածը (դեկտեմբերի 31-ից հունվարի 6-ը) հռչակվում էր «Որբերի փրկության շաբաթ»[18]: Ինչպես կարդում ենք մասնավորապես «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթում, այդ օրերին մասնաճյուղերի անդամները պիտի ջանային ժողովրդին ներկայացնել որբերի ճգնաժամային կացությունը և առաջարկեին հրաժարվել գոնե այդ տոների առթիվ կատարվելիք բոլոր ծախսերից ու նվերներից՝ դրանց գնման համար նախատեսած գումարը հատկացնելով առանց ծնողների մնացած հայ երեխաների օգնության նվիրական գործին[19]: Միջոցառման կազմակերպիչները հրահանգում էին մանաճյուղերին մինչև հունվարի 15-ը կազմակերպել ամանորյա հանդեսներ՝ ընդգրկելով նաև որբերին ու հօգուտ նրանց անցկացնելով աճուրդներ[20]: «Թաղերու մէջ այն ազգայինները, որոնք միանուագ գոնէ 50 ոսկի կը նուիրեն, պիտի ստանան «Որբերու պաշտպան» տիտղոսը կրող յատուկ պաշտօն գրէր՝ նուիրողին անուան, իսկ բոլոր թաղերը նկատի առնելով, այս առթիւ բարձրագոյն գումարը նուիրող անձին պիտի տրուի «Որբերու հայր» պատուանունը կրող յիշատակարան մը՝ հոգեւոր պետերու կողմէ, իր լուսանկարով միասին»[21],- ասվում էր այդ հրահանգում: Նշվում էր, որ թաղերի միջև մրցում կարող էր լինել, թե որ թաղում էր ավելի շատ նվիրատվություն հավաքվել: Այդ նպատա-

[18] Նույն տեղում, 1920, թիվ 645 («Հրահանգ որբերու փրկության թաղային մասնաճյուղերու կազմության և գործունեության»):

[19] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս,1920, թիվ 679 («Շրջաբերական») և թիվ 677(«Ծրագիր որբերու փրկության Կեդր.մարմնո»):

[20] Նույն տեղում, 1920, թիվ 677 («Ծրագիր որբերու փրկության Կեդր. մարմնո»):

[21] Նույն տեղում:

կով, ամենօրյա հավաքված գումարի չափը և նվիրատուների անունները տպագրվում էին պոլսահայ պարբերականների էջերում, իսկ ողջ գումարը մասնաճյուղերը փոխանցում էին Ղալաթիայում գտնվող Ազգային ելևմտից հանձնաժողովի գրասենյակ՝ Որբերի փրկության կենտրոնական մարմնի գանձապահ Սեպուհ Նավասարդյանին[22]: Կար նաև ոսկե շքադրամ ամենաառատաձեռն նվիրատուների համար[23]:

«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթը լուր էր տպագրել այն մասին, որ Կ.Պոլսում Մուդրոսի զինադադարից հետո հիմնված նուրբահյուս գործվածքով ծաղկանկար գլխաշորի կամ «յազմայի» արտադրամասերից մի քանիսը, բացի «Որբերի փրկության շաբաթ»-ի շրջանակում որոշակի գումար տրամադրելուց, ցանկություն էին հայտնել իրենց վրա վերցնել որբերի հայրությունը. «Այս կերպով ամեն մեկ գործարան պիտի կրնայ 5 որբի հայրութիւնը ստանձնել: Եւ ենթադրելով, որ 20 գործարաններ ընդունին այս կարգադրութիւնը, կարելի պիտի ըլլայ գոնէ 100 որբի ծախքը մասամբ ապահովել, ինչ-որ արհամարհելի բան մը չէ որբախնամութեան ներկայ տագնապին մէջ»[24]:

«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» պարբերականը տպագրել էր Որբերի փրկության կենտրոնական մարմնի հայտարարությունը, որով կոչ էր արվում բոլոր բարեսիրական միջոցառումները ծառայեցնել «Որբերի փրկության շաբաթ»-ի դրամահավաքին[25]: «Ճակատամարտը» նույնպես նմանատիպ հայտարարություն էր զետեղել իր էջերում: Այնտեղ գրված էր, որ առաջիկա տարեմուտի և սուրբ Ծննդյան տոների առթիվ, Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի հավանությամբ, Ելմտական հանձնաժողովի

---

[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում, 1921, թիվ 699 («Որբերու փրկության շաբաթ»):
[24] Նույն տեղում, 1920, թիվ 678 (««Սենտիքա»-յին որբերը»):
[25] Նույն տեղում, 1920, թիվ 687 (««Որբերու փրկության շաբաթը»»):

«Որբերի փրկության» մարմնի սկսած ընդհանուր հանգանակությանը կարող էին խանգարել թաղերում եղած տարբեր միությունների և կազմակերպությունների նպաստահավաք այլ գործողությունները. «Քաղաքական ժողովը պէտք տեսաւ ներկայ յայտարարութեամբ հրաւիրել բոլոր այդ մարմինները, որ ետ կենան իրենց մտադրութենէն ու իրենց օժանդակութիւնը բերեն միայն «Որբերու փրկութեան մարմին»ին ձեռնարկին, որու արդիւնքը պիտի յատկացուի հազարաւոր որբերու ու տարագիրներու օգնութեանը»[26]:

1920 թվականի դեկտեմբերի 31-ի համարում «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը հայտնում էր «Որբերի փրկության շաբաթ»-ի մեկնարկի լուրը, որի տևողությունը մեկ ամսով երկարացվելու էր. «Այսօր, ինչպէս վաղը եւ մինչեւ Ծնունդ և, եթէ պէտք ըլլայ, ամբողջ յնվր. ամսուան ընթացքին «Որբերու փրկութեան» թաղային մասնաճիւղերը նուէրներ պիտի հաւաքեն որբերուն համար: Սիրով ընդունեցէք փրկութեան մասնաճիւղերուն այցելութիւնները»[27]: «Ճակատամարտն» էլ դեկտեմբերի 30-ի իր խմբագրականում նշում էր, թե «Որբերի փրկության շաբաթ»-ով չէր ավարտվելու տարագրյալ երեխաների ու մեծահասակների աջակցության համահայկական ծրագիրը, քանի որ այն «ինչքան ալ հասութաբեր ըլլայ, չի կրնար գոհացնել բոլոր պահանջները»[28]: Օրաթերթն առաջարկում էր նոր հիմքերի վրա դնել որբերի պատսպարման ու դաստիարակության գործը՝ ստեղծելով ցանցային կազմակերպություն, որտեղ յուրաքանչյուր հայ մարդ պիտի սովորեր կատարել սեփական պարտականությունը՝ կարողություններին համապատասխան. «Ոչ մէկը դուրս պիտի մնայ այդպիսի կազմակերպութենէ մը: Կը բաւէ ինչքան ստորնացանք «նայեցէք, ողորմեցէք»ի կերպարանք մը տալով

[26] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1920, թիվ 643 («Որբերու փրկության օր»):

[27] «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», Կ.Պոլիս, 1920, թիվ 688 («Այսօր կսկսի «Որբերու փրկության շաբաթը»»):

[28] «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1920, թիվ 645 («Մինչև հունվար տասը»):

որբերու, այրիներու, տարագիր հայրենակիցներու խնամատարութեան գործին: Պոլսոյ համար անըմբռնելի է բախտին ձգել հինգ, տասը հազար մանուկներու խնամատարութիւնը: Եթէ տասնապատիկ աւելի ըլլար այսօր պատսպարուած որբերուն թիվը, Պոլիսը դարձեալ կրնայ պահել զանոնք: Այնպէս որ, «Որբերու շաբաթ»ը պէտք չէ նկատուի սովորական աչքով, գանձանակը տասնոց մը նետելու ձեւով: Պէտք է մոռնալ այս կարգի օգնութիւնները իբրև նուիրահաւաքում նկատելու վարժութիւն և համարել պարզապէս քաղաքացիական պարտականութիւն կամ աւելի փափուկ բառով մը՝ ճիտի պարտք»[29]: Թերթի խմբագրակազմը, ինչպես երևում է այս խորագրի տակ ամփոփված նյութերից, ներքին համոզում ուներ այս ձեռնարկի հաջողության համար: «Երբէք չենք խորհիր, որ առիթը պիտի ունենանք մասնաճիւղերու կողմէ ստանալու տեղեկագրեր, որոնք մեզ ծանուցանեն մերժումներ, փակ դուռներ, խուսափողական և ոչ վայելուչ պատասխաններ, որոնք բարոյական ծանր պատասխանատուութեան կ'ենթարկեն ենթական: Ապացուցանենք դրապէս, որ մենք կ'ընդունինք մեր որբերը իբրև մեր փրկութեան յենարանները և մեր գոյութեան հիմերը: Այս կերպով է, որ պիտի խաղաղին մեր միլիոնաւոր նահատակներուն խռոված հոգիները: Ճշմարտութիւն է, որ հայ որբերու ազատագրութեան և փրկութեան գործին շուրջ բոլոր հայերը միացած են՝ առանց սեռի, տարիքի ու դաւանանքի խտրութեան: Մենք վստահ ենք, որ ամեն հայ մէկ մտածում միայն ունի հայ որբերուն համար, այն է՝ օգնել անոնց և մանաւանդ զգացնել, որ անոնք մեր զաւակները, մեր ընտանիքին անդամները, մեր սրտին, մեր հոգւոյն հատորներն են»[30],- գրում էր թերթը:

---

[29] Նույն տեղում:

[30] Նույն տեղում, 1921, թիվ 658 («Պոլսահայ ժողովուրդին»):

1921 թվականի հունվարի երկրորդ կեսին վերջնականապես որոշում են երկարաձգել մինչև ամսվա վերջ նվիրատվությունների հավաքագրումը, քանի որ արդյունքներն այդքան էլ գոհացուցիչ չէին: Այդ մասին գրում էր «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը՝ նշելով, թե հանգանակությունը պետք է միջինը հասցնել 50.000 թղթադրամ ոսկու[31]: «Նպաստեցէք առատօրէն: Որբերը փրկել՝ կը նշանակէ շինել Հայաստանը»[32],- կարդում ենք թերթում: Պարբերականը նաև առաջարկում էր հայ որբուկներին անվանել «Ազգի սաներ»[33]:

Ի տարբերություն վերոհիշյալ պարբերականների՝ «Վերջին լուր» օրաթերթը հիմնականում «Ազգային լուրեր» բաժնի լրաքաղի մեջ էր անդրադարձել «Որբերի շաբաթ» նախաձեռնությանը, որոնց վերջում կամ ամփոփիչ խոսքում երբեմն տվել էր գնահատականներ արված աշխատանքին ու ներկայացրել էր նկատած թերությունները, իսկ որբերի և որբանոցների թեմաներով պարբերականում կային բազմաթիվ վերլուծական հոդվածներ և ռեպորտաժային թղթակցություններ: 1921 թվականի հունվարի վերջին, օրինակ, թերթի թղթակիցը դրական էր համարում այն, որ որբերի փրկության համար կազմակերպված հանգանակություններն «արդար մրցակցութիւն մը սկսած»[34] էին Կ.Պոլսի թաղերի միջև: «Ամեն թաղային յանձնախումբ կը ջանայ կարելին ընել, ժողովուրդը աւելի լայնօրէն մասնակից ընելու համար այս սրբազան գործին»[35],- կարդում ենք այդ թղթակցությունում: Նշվում էր, որ, հանգանակություններից բացի, որբերի պաշտպանի ոսկե շքադրամների աճուրդում Շիշլի-Բանկալթի-Ֆերիգյուղ միացյալ թաղն առաջ էր անցել Գատը

[31] Նույն տեղում, 1921, թիվ 699 («Որբերու փրկության շաբաթ»):
[32] Նույն տեղում, 1921, թիվ 690 («Օգնեցե՛ք որբերուն»):
[33] Նույն տեղում, 1921, թիվ 708 (««Ազգին սաները» հոգալու համար»):
[34] «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, թիվ 2089 («Որբերու փրկության մրցումը»):
[35] Նույն տեղում:

գյուղին՝ գումարը հասցնելով մինչև 1260 ոսկու՝ նրանց առաջարկած 1200 ոսկու փոխարեն[36]: Լուրերից մեկում էլ տեղեկացվում էր, որ բավական գումար էր հավաքվել «Սինէմա Բաթէի»[37] թատրոնում անցկացված գեղեցիկ հանդեսի ժամանակ: Դրան մասնակցել էին նաև Գարակյոզյան որբանոցի սաները, որոնց ասմունքը և մարզախաղն արժանացել էին ներկաների բուռն ծափերին[38]: Պարբերականի հոդվածագիր Լ. Ավագյանը մի կողմից փաստում էր, որ նույնիսկ անտանելի քաղաքական հանագամանքներում հայ ժողովրդի մեծամասնությունը պատրաստակամությամբ և սիրահոժար մասնակցում էին որբերի և կարիքավորների օգնության գործին, մյուս կողմից ասում էր, որ Կ.Պոլսի մեծահարուստ հայերը, չնչին բացառություններով, խուսափում էին համահայկական հանգանակություններին մասնակցել[39]: «Փրկութեան մասնախումբի անդամ մը առջի օր կ՚ըսէր ինծի, թէ եթէ հազար հարուստներ գտնուէին, ինչ որ դժուար չէ, և տասնեակ ոսկի նուիրէին միահաղոյն, արդէն իսկ տասը հազարի գումար մը ապահովուած կ՚ըլլար մեր որբերուն համար: Անշուշտ, ժողովրդային հանգանակութիւնն ալ կրնար այս գումարէն նոյն իսկ աւելին ալ արտադրել, սակայն ո՞րն է արդեօք ա՛յն անդիմադրելի ուժը, որ կարենայ շարժել մեր հարուստները»[40],- ահա, այս կարևոր հարցադրմամբ էր ավարտում իր վերլուծականը հոդվածագիրը: Մ. Անգութ կեղծանվամբ հանդես եկած մեկ այլ հոդվածագիր էլ առաջարկում էր հանգանակությունների ծրագիրն ավարտելուց հետո ուշադրություն դարձնել հայկական որբանոցների կառավարման բացերին, որ վնաս չհասցվի անծնող մանուկնե-

[36] Նույն տեղում:
[37] Նույն տեղում:
[38] Նույն տեղում:
[39] Նույն տեղում, 1921, թիվ 2085 («Փրկության շաբաթը»):
[40] Նույն տեղում:

րի համար հավաքվող ազգային սնդուկի գումարներին[41]: «Փոքրիկ քննութիւն մը երեւան պիտի հանէ տիրող ախտաւոր վիճակը, ուրկէ վնասուողներն են ուղղակի մեր որբերը, որոնց վրայ է մեր յոյսը: Մեր հազարաւոր որբերուն հոգածութեան գործը յանձնել ապիկար և անաւժան ձեռքերու, կը նշանակէ ամենամեծ դաւաճանութիւնը ընել հանդէպ ազգին: Ազգ.խնամատարութեան վարչութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կէտին վրայ, և կը սպասենք, որ մաքրագործում տեղի ունենայ վերէն վար»[42],- կարդում ենք «Որբանո՞ց, թե՞անկելանոց» վերնագրով հոդվածում:

Պետք է փաստենք, որ Ազգային խնամատարությանն էին դիմում ոչ միայն վերոշարադրյալ հարցերով, այլև կոնկրետ որբերի հետագա կյանքը կարգավորելու, նրանց որդեգրման կամ խնամակալության խնդիրներով: Օրինակ բերենք «Վերջին լուր» օրաթերթում տպագրված այս իրական դեպքը, որը տեղի է ունեցել «Որբերի փրկության շաբաթ»-վա ընթացքում: Ազգային խնամատարության անդամ, պոլսահայ հայտնի հրապարակախոս Վահան Շահրիմանի տան դռան դիմաց զամբյուղի մեջ էին թողել նորածին հայ տղա երեխայի[43]: «Հետևեալ օրը կ'իմացուի, որ երախան յատկապէս դրուած է պ. Շահրիմանի դրան առջև, նկատելով, որ ան իբրև անդամ Ազգ. խնամատարութեան, դիւրութիւններ ունէր երախան մանկանոց մը պատսպարելու»[44],- գրում էր թերթի լրագրողը՝ նաև հայտնելով ուրախ լուր այն մասին, որ մի անզավակ հայ ընտանիք արդեն որդեգրել էր փոքրիկ տղային, իսկ նրա կնքահայրն էր դարձել հենց Վահան Շահրիմանը[45]:

---

[41] Նույն տեղում, 1921, թիվ 2085 («Որբանո՞ց, թե՞անկելանոց»):

[42] Նույն տեղում:

[43] Նույն տեղում, 1921, թիվ 2084 («Ընկեցիկ մը պ.Վ. Շահրիմանի դռան առջև»):

[44] Նույն տեղում:

[45] Նույն տեղում:

1921 թվականի փետրվարի 11-ին «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» օրաթերթը տեղեկացնում էր, որ պատրիարքարանն, Ազգերի դաշնակցության լիգայի պահանջով, այդ կազմակերպությանն էր ուղարկել հայ որբերի վիճակին նվիրված իր տեղեկագիրը, որտեղ թվային վերլուծությամբ պատկերացում էր տրված, թե հայ որբերից «ո՞րքանը հաւաքուած էր մինչեւ հիմա, ու՞ր կը գտնուէին, ի՞նչ վիճակի մէջ, եւ ո՞րքան որբեր կան տակաւին օտար ձեռքերու մէջ»[46]: Նույն ժամանակահատվածում պատրիարքարանն, ամփոփելով որբախնամ ու որբափրկիչ ծրագրերի արդյունքները, արձանագրում էր, որ մահմեդականների ընտանիքներում դեռևս մնում էին 63.000 հայ որբեր[47]:

1922 թվականի հունիսի 2-ին Ազգային պատվիրակաության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ Մուդրոսի զինադադարից մինչև 1921 թվականի դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ.Պոլսում հավաքվում է 1.536.157 օսմանյան ոսկի՝ որբերի և տարագրյալների համար զանազան բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով[48]: Ինչպես նշված է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կայքում տեղադրված վերլուծականում՝ որբախնամ աշխատանքների համար հավաքված միջոցներից պատրիարքարանը նպաստ է ուղարկում Կոնիա, Հալեպ, Կարին, Սամսուն, Բրուսա, Բանդրմա, Էսքիշեհիր, Դամասկոս, Երուսաղեմ և մի շարք այլ վայրերում գտնվող որբերի և տարագրյալների կայաններ. «Ցեղասպանությունը վերապրած հայության բեկորների փրկության գործում մեծ է Զավեն պատրիարքի և Կ.Պոլսի

---

[46] *«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ»*, Կ.Պոլիս, 1921, թիվ 722 («Ազգերու դաշնակցությունը և հայ որբերը»):

[47] **Ռուբեն Մելքոնյան,** *«Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը»*, Երևան, 2010, «ՎՄՎ-պրինտ», էջ 66:

[48] **Զաւէն արքեպս.,** նշվ. աշխ., էջ 2282–283:

պատրիարքարանի ներդրումը»[49]: Իսկ Շուշան Խաչատրյանն էլ փաստել է, որ պատրիարքը հավելյալ նպաստներ էր ուղարկել նաև մի շարք մտավորականների և նրանց ընտանիքների, Կիլիկիո կաթողիկոսին և այլ հոգևորականների, այդ թվում՝ աքսորյալ կամ հալածյալ հոտի խնամքի գործը տեղում ստանձնած բազմաթիվ քահանաներին հատկացնելով ամսական մեկ ոսկու չափով նպաստ[50]:

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

✓ 1919–1921 թվականներին Կ.Պոլսում հրատարակված վերոհիշյալ երեք պարբերականների էջերում ամփոփված հրապարակումների համաձայն՝ ոչ միայն տեղի հայ համայքի, այլև ընդհանրապես աշխարհասփյուռ հայության հոգածության կենտրոնում են եղել հայ որբերն ու տարագիրներն իրենց տարաբնույթ կարիքներով, ամենօրյա խնդիրներով և ապագայամետ ծրագրերով,

✓ «Հայրենիքի տուրք»-ի և «Որբերի փրկության շաբաթ»-ի նախաձեռնություններին անմասն չի մնացել կոնկրետ պոլսահայության մեծամասնությունը, ինչը վկայում է, որ այդ ծրագրերը ժամանակավրեպ չէին, ունեին պահանջարկ, օրախնդիր էին և հոգեհարազատ էին մասնակիցներին,

✓ հավաքվել է նախատեսվածից ավելի գումար, անկախ այն հանգամանքից, որ «Հայրենիքի տուրք» որոշ անձինք ստիպողաբար էին վճարում, իսկ «Որբերի փրկության շաբաթ»-ի հանգանակությունների դեպքում պարբերականները չեն վկայել նման պահվածքի մասին, ընդհակառակը, բոլորն էլ նշել են, որ ցեղասպանությունից փրկված հայերը յուրահատուկ վերաբերմունք ունեին

---

[49] http://www.genocide-museum.am/arm/TempExh_RESCUE_OF_ARMENIANS-4.php

[50] https://www.academia.edu/44955912/ (**Շուշան Խաչատրյան,** «Կ.Պոլսի պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի՝ Հայոց ցեղասպանության տարիներին իրականացրած ազգախնամ գործունեության շուրջ», էջ 319):

որբերի նկատմամբ, և նրանց նվիրատվություններն սրտաբուխ էին ու հիմնականում մրցակցության մեջ էին մտնում թաղերը, թե որտեղ ավելի շատ գումար կհավաքվի,

✓ պետք է փաստենք, սակայն, որ որբախնամ ու որբափրկիչ, ինչպես նաև գաղթականների աջակցությանն ուղղված արևմտահայության բոլոր կարևոր նախաձեռնությունները հիմնականում մնացին կիսատ՝ Հայաստանի Առաջին հանրապետության անկման, անկախ պետականության կորստի և քեմալականների վարած հայահալած ու հայակործան քաղաքականության հետևանքով, ինչպես նաև, պատճառների մեջ կարելի է ավելացնել Մուդրոսի զինադադարից հետո Կ.Պոլիս ու բուն Արևմտյան Հայաստանի բնակավայրեր վերադարձած հայության նոր ջարդերի ու հայրենի եզերքից բռնի տեղահանության թուրքական զավթողական ծրագրի իրականացումը արդեն հանրապետական Թուրքիայում,

✓ կարիքավորների և մասնավորապես երեխաների նկատմամբ առանձնահատուկ մոտեցումը հայ ժողովրդի գենոֆոնդի մեջ է, ինչի վկայությունն էր 44-օրյա պատերազմը, երբ մեզանից յուրաքանչյուրը, Հայրենիքում կամ սփյուռքում անասելի ցավ էր ապրում բոլորովին անծանոթ մարդկանց զավակների տառապանքների, գերության կամ մահվան բոթը լսելիս, իսկ այդ օրերին մեզ որքան էին ոգեշնչում հայ դպրոցահասակ երեխաների և բազմաթիվ կրթօջախների կոլեկտիվների կողմից ազգային բանակի ու մարտնչող զինվորների համար քաղցրավենիք ու ծխախոտ հավաքվելու և նմանաբնույթ նախաձեռնությունները, ինչը խոսում է այն մասին, թե բարեսիրությունն ու բարեգործությունը մեր կողքին ու մեր մեջ են, մեր հոգում և սրտում են՝ պատրաստ վարակիչ կերպով դրսևորվելու անհրաժեշտության դեպքում:

«ДАНЬ РОДИНЕ» И «НЕДЕЛЯ СПАСЕНИЯ СИРОТ» НА СТРАНИЦАХ КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ АРМЯНСКОЙ ПЕРИОДИКИ (1919–1921 ГГ.)

ОВСЕПЯН М.

Резюме

Ключевые слова: родина, сироты, вынужденные переселеннцы, благотворительность, сбор средств.

Публикации констанопольских армянских периодических изданий свидетельствуют о том, что благотворительные программы «Дань родине» и «Неделя спасения сирот» были обусловлены велением времени. Они были близки не только армянам, живущим в Константинополе, но и армянам, живущим в разных странах мира. Эти программы оказались эффективными. Цели, поставленные перед организаторами, были достигнуты. Средства на указанные программы для вынужденных переселенцев и сирот собирались в основном на добровольной основе и направлялись на решение конкретных проблем.

«TRIBUTE TO THE HOMELAND» AND «ORPHANS' RESCUE WEEK» ON THE PAGES OF CONSTANTINOPLE ARMENIAN PERIODICALS (1919–1921)

HOVSEPYAN M.

Summary

Keywords: homeland, orphan, refugees, charity, donation.

The Constantinople Armenian publications prove that «Tribute to the homeland» and «Orphans' rescue week» charity programs were conditioned by the times. They were close not only to Armenians from Constantinople but also to Armenians living in different parts of the world. These programs were very effective. The goals of the organizers were achieved. All the money collected through these programs on a voluntary basis for immigrants and orphans was used to solve specific problems.